

Օ Ր Ա Կ Ա Ր Գ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԼՈՒՈՒՒ ՄԱՐԶԻ  
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆԴՀԱՅՆՎԱԾ ՆԻՍՏԻ

20.02.2020թ.

h. Ստեփանավան

- ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆԴՀԱՅՆՎԱԾ ՆԻՍՏԻ  
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկյուցող Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

- ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՏԵՍԱՆՅՈՒԹ

- ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
2018-2022ԹԹ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՏԵՍԱՆՅՈՒԹ

- ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 23.12.2019Թ. ԹԻՎ 99-Ա ՈՐՈՇՄԱՆ  
ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկյուցող Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

- «ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ  
ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒ  
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկյուցող Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

- ՀՀ ԼՈՒՈՒՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 04.02.2020Թ.  
N 06-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒՓԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկյուցող Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ստեփանավան համայնքի ավագանու

Որոշում

**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետը՝ Ստեփանավան համայնքի ավագանին

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

1. Հաստատել համայնքի ավագանու ընդլայնված նիստի օրակարգը համաձայն հավելվածի:

Կազմեց՝

Ռ.Քոչարյան

Ստեփանավան համայնքի ավագանու

Որոշում

**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Հաստատել Ստեփանավան համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ (կից տեսանյութ):

Կազմեց

Թ. Ղարիբյան

Նախագիծ

Ստեփանավան համայնքի ավագանու

Որոշում

**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ**

**2018-2022ԹԹ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման 2018-2022թթ. հնգամյա ծրագրի նախագծին վերաբերող հանրային լսումների ընթացքում կատարված առաջարկությունները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջներով Ստեփանավան համայնքի ավագանին

1. Հաստատել Ստեփանավան համայնքի 2018-2022թթ. սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը՝ (կից տեսանյութի):

Կազմեց՝

Ռ. Քոչարյան

Նախագիծ

Ստեփանավան համայնքի ավագանու

որոշում

**ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 23.12.2019Թ. ԹԻՎ 99-Ա ՈՐՈՇՄԱՆ  
ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, Ստեփանավան համայնքի ավագանին որոշում է՝

1. Ուժը կորցրած ճանաչել Ստեփանավան համայնքի ավագանու 23.12.2019թ. թիվ 99-Ա որոշման հավելված 3-ը
2. Հաստատել Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 4-ի:
3. Որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Կազմեց՝

Ռ. Քոչարյան

Հավելված

4

ՀՀ Լոռու մարզի

Ստեփանավան համայնքի

ավագանու

2020թ. փետրվարի 20-ի N 11-Ա որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,  
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

Աշխատակիցների թվաքանակը՝ 57

Հաստիքների թվաքանակը՝ 57

**ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ**

<b>N</b>	<b>Պաշտոնի անվանում</b>	<b>Դրույք</b>	<b>Դրույքաչափ</b>	
1	Համայնքի ղեկավար	1	350000	<b>350000</b>
<b>Հայեցողական պաշտոններ</b>				
1	Վարչական ղեկավար	2	200000	400000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	230000	230000
3	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	200000	200000
4	Համայնքի ղեկավարի օգնական	1	163000	163000
5	Համայնքի ղեկավարի օգնական	1	180000	180000
6	Համայնքի ղեկավարի մամլո խոսնակ	1	127000	127000
	<b>Ընդամենը</b>	<b>7</b>		<b>1120000</b>
<b>Համայնքային ծառայության պաշտոններ</b>				
1	Աշխատակազմի քարտուղար	1	410000	<b>410000</b>
<b>Քաղաքաշինության, հողօգտագործման, արտակարգ իրավիճակների, տրանսպորտի և առևտրի բաժին</b>				
1	Բաժնի պետ	1	215000	215000
2	Առաջատար մասնագետ	2	125000	250000
3	Առաջին կարգի մասնագետ	3	113000	339000
	<b>Ընդամենը</b>	<b>6</b>		<b>804000</b>
<b>Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների, հաշվառման և հավաքագրման, բաժին</b>				
1	Բաժնի պետ	1	215000	215000
2	Բաժնի պետի տեղակալ	1	193000	193000
3	Գլխավոր մասնագետ	2	173000	346000

4	Առաջատար մասնագետ	1	125000	125000
5	Առաջին կարգի մասնագետ	2	113000	226000
6	Երկրորդ կարգի մասնագետ	1	105000	105000
	<b>Ընդամենը</b>	<b>8</b>		<b>1197617</b>
<b>Ք Կ Ա Գ</b>				
1	Բաժնի պետ	1	256723	256723
2	Առաջին կարգի մասնագետ	1	133603	133603
	<b>Ընդամենը</b>	<b>2</b>		<b>390326</b>
<b>Աշխատակազմ (կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ)</b>				
1	Գլխավոր մասնագետ, ճարտարապետ	1	173000	173000
2	Գլխավոր մասնագետ, իրավաբան	1	173000	173000
3	Գլխավոր մասնագետ	2	173000	346000
4	Առաջատար մասնագետ	2	125000	250000
5	Առաջին կարգի մասնագետ	4	113000	452000
	<b>Ընդամենը</b>	<b>10</b>		<b>1394000</b>
<b>Քաղաքացիական ախատանք կատարողներ</b>				
1	Արտաքին կապերի ինֆո կենտրոնի համակարգող	1	106000	106000
2	Համակարգչային ծառայության պատասխանատու	1	106000	106000
	<b>Ընդամենը</b>	<b>2</b>		<b>212000</b>
<b>Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ</b>				
1	Էլեկտրիկ	1	126000	126000
2	Գործավար-քարտուղարուհի	1	112000	112000
3	Վարորդ	2	92617	185234
4	Համակարգչային ցանցի սպասարկող	1	106000	106000
5	Տնտեսվար	1	89611	89611
6	Ցրիչ	1	89611	89611
7	Գանձող	2	89611	179222
8	Հավաքարար	5	89611	448055
9	Պահակ	4	89611	358444
10	Բանվոր	1	92617	92617
11	Բանվոր	1	89611	89611
	<b>Ընդամենը</b>	<b>20</b>		<b>1876405</b>
		<b>57</b>		<b>7766731</b>

Նախագիծ

Ստեփանավան համայնքի ավագանու

Որոշում

«ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ

ԹԵԿՆԱԾՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ստեփանավան համայնքի «ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հրայա Սուքիասյանը ազատվել է աշխատանքից և տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել նույն կազմակերպության փոխտնօրեն Սամվել Խարազյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սամվել Խարազյանը ունի աշխատանքային փորձ, կազմակերպչական ունակություններ, նրա թեկնածությունը ներկայացվում է տնօրենի պաշտոնում նշանակվելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 16-րդ կետով Ստեփանավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հաստատել Սամվել Համլետի Խարազյանի (անձնագիր՝ AS 0510781, տրված 20.02.2019թ., 053-ի կողմից) թեկնածությունը «ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում:

Կազմեց՝

Ռ. Քոչարյան

Նախագիծ

Ստեփանավան համայնքի ավագանու

Որոշում

**«ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»  
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ  
ԹԵԿՆԱԾՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ստեփանավան համայնքի «ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հրայա Սուքիասյանը ազատվել է աշխատանքից և տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել նույն կազմակերպության փոխտնօրեն Սամվել Խարազյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սամվել Խարազյանը ունի աշխատանքային փորձ, կազմակերպչական ունակություններ, նրա թեկնածությունը ներկայացվում է տնօրենի պաշտոնում նշանակվելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 16-րդ կետով Ստեփանավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հաստատել Սամվել Համլետի Խարազյանի (անձնագիր՝ AS 0510781, տրված 20.02.2019թ., 053-ի կողմից) թեկնածությունը «ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում:

Կազմեց՝

Ռ. Քոչարյան

Նախագիծ

Ստեփանավան համայնքի ավագանու

Որոշում

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 04.02.2020Թ. N 06-Ա  
ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողերից Ստեփանավանի քաղաքային համայնքին անհատույց փոխանցվող հողերի մասին ՀՀ կառավարության 27.04.2006թ. 570-Ն որոշման հավելված N 6 –ով Ստեփանավան համայնքի ավագանին



Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Ուժը կորցրած ճանաչել Ստեփանավան համայնքի ավագանու 04.02.2020թ. թիվ 06-Ա որոշումը, քանի որ Ստեփանավան համայնքի սեփականությունը հանդիսացող Գ.Նժդեհի փողոց 5/1 հասցեի, 06-007-0084-0011 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.001151 համակերտով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը համարվում է չմասնավորեցվող տարածք:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կազմեց՝

Հ. Արրահամյան